



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 174/2-2A « 11 » 09 2023

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1676-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգի 11-րդ կետի պահանջները, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի օգոստոսի 21-ի նիստի թիվ 65 որոշումը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ՝

1. Հաշվի առնելով առարկաների շարունակականության սկզբունքը՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի բակալավրիատի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի ներքոնշյալ կրթական մոդուլների կրեդիտի ձեռք բերման համար պարտադիր համարել «նախապայման» սյունակում ներկայացված կրթական մոդուլներից ձեռք բերված կրեդիտը՝

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ՄԵԽԱՆԻԿԱ, ԿՎՏԳ կրթական ծրագրեր		
	Կրթական մոդուլ	Նախապայման
1.	Մաթեմատիկական անալիզ - 2	Մաթեմատիկական անալիզ - 1
2.	Հանրահաշիվ - 2	Հանրահաշիվ - 1
ԱԿՏՈՒԱՐԱԿԱՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ կրթական ծրագիր		
	Կրթական մոդուլ	Նախապայման
1.	Մաթեմատիկական անալիզ - 2	Մաթեմատիկական անալիզ - 1
2.	Հանրահաշիվ և վերլուծական երկրաչափություն - 2	Հանրահաշիվ և վերլուծական երկրաչափություն - 1
3.	Տնտեսագիտության տեսություն - 2	Տնտեսագիտության տեսություն - 1

2. Սույն հրամանը տարածվում է 2023-24 ուսումնական տարում Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ ընդունված ուսանողների վրա:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել կրթական ստորաբաժանման ղեկավարին, ուսումնամեթոդական վարչությանը և կրթական ստորաբաժանման ուսանողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր

Հ. Հովհաննիսյան